Կրթաթոշակներ արվեստագետների, դիզայներների և ճարտարապետների համար

(ուշադրություն՝ փոփոխված ընթացակարգ)

Նպատակը

- Կրթաթոշակները կիրառական արվեստ, դիզայն, կինոարվեստ, երաժշտություն և ճարտարապետություն, ինչպես նաև դերասանական արվեստ, ռեժիսուրա, պար և խորեոգրաֆիա ուսանող դիմորդներին հնարավորություն են ընձեռում ուսանել գերմանական որևէ պետական բուհում՝ գիտելիքների խորացման համար՝ առանց ավարտի:

Տևողությունը

- Որպես կանոն կրթաթոշակ տրամադրվում է մեկ ուսումնական տարվա համար: Որոշ դեպքերում կրթաթոշակը կարող է երկարացվել՝ համաձայն հայցադիմումի:

Կրթաթոշակային վճարումներ

- DAAD¬ն վճարում է ամսական 750 եվրո կրթաթոշակ: Կրթաթոշակը իր մեջ ներառում է նաև որոշակի վճարումներ, ինչպես օր. ուղեբեռի համար վճարումներ և ապահովագրական մասնակի վճարումներ: DAAD¬ն վճարում է նաև ճանապարհասախսը:

Դիմելու համար անհրաժեշտ նախադրյալները

- Կրթաթոշակները որպես կանոն տրամադրվում են այն դիմորդներին, ովքեր սպառել են հայրենիքում կրթություն ստանալու բոլոր հնարավորությունները և նախընտրելի է, որ նաև ավարտել են համապատասխան վկայականով:
- Դիմորդը DAAD դիմում ներկայացնելու պահին տեղեկացնում է, թե գերմանական որ բուհում և որ պրոֆեսորի մոտ է նա ցանկանում սովորել և ներկայացնում է փոխադարձ համաձայնությունը հաստատող հրավեր նամակ:
- Կրթաթոշակառուների վերջնական ընտրությունը կատարում է Բոննում հրավիրված մասնագետներից կազմված հանձնաժողովը: Բացի ներկայացվող փաստաթղթերից, ընտրության համար ամենակարևոր դերը խաղում են ներկայացվող ձայնագրությունները՝ երաժիշտների դեպքում, կամ կատարված աշխատանքների դիապոզիտիվները, լուսանկարները և այլն՝ մյուս դիմորդների դեպքում:
- Կրթաթոշակ տրամադրելու փաստը դեռևս բուհ ընդունվելու թույլտվության գրավական չէ: Յուրաքանչյուր բուհ ինքն է կայացնում դիմորդին ընդունելու որոշումը, տվյալ դեպքում անհրաժեշտ է հանձնել նաև ընդունելության քննություն: Կրթաթոշակը ուժի մեջ է մտնում միայն այն դեպքում, երբ արդեն առկա է գերմանական բուհում կրթությունը շարունակելու վերաբերյալ գրավոր թույլտվությունը:
- Դիմորդները, որոնք դիմելու պահին մեկ տարուց ավել եղել են Գերմանիայում, չեն կարող դիմել ծրագրին:

Դիմելու համար անհրաժեշտ փաստաթղթերը

Դիմումի ձև ներկայցվում է on-line – տարբերակով, **MOVE**-համակարգով (www.funding-guide.de)

Բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացնել նաև թղթային տարբերակով՝ երեք օրինակից :

- Դիմումի ձև՝ www.funding-guide.de, MOVE-համակարգով, գրանցվելուց և դիմումաձևը լրացնելուց հետո պետք է վերբեռնել բոլոր անհրաեշտ փաստաթղթերը, որոնք ներկայացված են ստորև: Մանրամասները նայել DAAD հայաստանյան կայք-էջում
- Կենսագրություն
- Գերմանիայում սովորելու համար հիմնավորում
- Հրավեր գերմանացի պրոֆեսորի կողմից (եթե առկա է)
- Տեղեկություն ընտրված կուրսի մասին (օր.՝ Ինտերնետից ընտրված հատված հետևյալ տվյալներով. ծրագրի սկսելու ժամկետը, տևողությունը, դասավանդման լեզուն, ուսման վճարները, դիմելու համար անհրաժեշտ պայմանները, դիմելու ժամկետները, հասցեն): Այս տվյալները դիմորդները պետք է լրացնեն DAAD-ի ինտերնետային կայքում տեղակայված համապատասխան հայցադիմումի վրա:
- Մասնագետ-դասախոսների կողմից տրված 1 երաշխավորագիր՝ լրացված համապասխան DAAD բլանկի վրա
- Ատեստատի պատճենը և թարգմանությունը
- Դիպլոմի կամ բակալավրի դիպլոմի պատճենը և թարգմանությունը (միջուկը ևս պարտադիր է)
- Լեզվի իմացության վկայական (գերմաներենի դեպքում On DaF, Test DaF, DSD, DSH, ինչպես նաև Գյոթե ինստիտուտի կողմից ճանաչված համապատասխան վկայականները) կամ (անգլերենի դեպքում TOEFL, IELTS)
- Աշխատանքների նմուշները և ներկայացվող բոլոր աշխատանքների ցուցակը (պետք է ուղղորդվեն կայքում գտնվող համապատասխան լիկերով գործերը ճիշտ ֆորմատով ներկայացնելու համար)

Համապատասխան վկայականները պետք է վերբեռնել միայն նշված վերնագրի տակ:

Երաշ;ավորագիր նամակները խնդրում ենք չվերբեռնել: Նրանք պետք է հանձնել DAAD երևանյան գրասենյակ փակ ծրարով:

Բոլոր փաստաթղթենը վերբեռնելուց հետո Դուք կստանաք Ձեր փաստաթղթերի ամբողջական տարբերակը՝ pdf ֆայլի տեսքով: Այն պետք է տպել 3 օրինկաից և հանձնել DAAD երևանյան գրասենյակ:

Բոլոր փաստաթղթերը պետք է հանձնել առանց ամրակների, միակողմանի տպված:

Լրացուցիչ փաստաթղթեր չեն ընդունվում և խնդրում ենք նաև չվերբեռնել:

Ուշադրություն

Դիմումների պետք է ուղարկել ուղիղ DAAD Բոնի գրասենյակ մինչև սույն թվականի հոկտեմբերի 31-ը՝: Երևանյան գրասենյակ գործերը հանձնել պետք չէ:

Գերմաներեն լեզվի քննությունը տեղի կունենա նոյեմբեր ամսին փաստաթղթերի հանձնումից հետո: